ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 հուլիսի 2013 թվականի N 291 -Ա

ք.Հրազդան

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՀՍԿԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ՊԼԱՆԱՅԻՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 12-ի N 624 որոշմամբ հաստատված կարգի 4-րդ գլխի դրույթների, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2013 թվականի մայիսի 14-ի N 29-Ա կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի կողմից կազմված 2013 թվականի հունիսի 7-ի N 5 պլանային ստուգման արձանագրությունը՝ **որոշում եմ.**

1.Առաջարկել Առինջ համայնքի ղեկավարին.

1)քննարկման առարկա դարձնել պլանային ստուգման արդյունքները և վերացնել քաղաքաշինության բնագավառում արձանագրված խախտումները, իրավախախտում թույլ տված անձանց՝ օրենքով սահմանված կարգով ենթարկել վարչական պատասխանատվության:

2)արդյունքների մասին տեղեկատվություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարան:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կ.ՇԱՀԳԱԼԴՅԱՆ